

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ՇԱՆԹԻ «ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐ»ՈՒՆ

(Բանախօսութիւն Պ. ՏԻԳՐԱՆ ՉԷՕԿԻԻՐԵԱՆԻ)

Տիկնայք եւ տեարք,

Վերլուծութիւնը պիտի ընեն գործի մը՝ որ գրեթե երկու ամիսէ ի վեր կը զբաղացնէ կովկասահայ թատերական եւ գրական շրջանները. ու հոն, Կովկասի մէջ, հակառակ գրական դատավարութեան ժխտական արդիւնքին, ամէն հազուադէպ բացառութիւններէ զատ, համաձայն է գովելու Շանթի գործին գեղարուեստական մեծ արժէքը:

Կը կարծեն որ՝ գրական գործի մը դատով մօտենալու ձեւը անյարմար է, ինչպէս անարդար. որովհետեւ՝ դատ մը արագութիւն կը պահանջէ, մինչ Շանթի հայ գրականութեան հանդէպ... գործած ոճիրը այնքան ստիպողական չի դարձներ նման ձեռնարկ մը: Յետոյ դատի մը ելքը՝ զայն վարող փաստաբաններու հմտութենէն, պերճախօսի ձիրքերէն, փաստելու, համոզելու, յուզելու կարողութենէն կախում ունի: Այդ յատկութիւններով օժտուած մը կրնայ ոճիրը մեղմել, արդարացնել, կամ արդարը կորուստի մատնել: Ինչպէս կը տեսնուի դատավարութեան մը մէջ՝ հակառակ արդարութեան գաղափարին, անարդարութեան մը բոլոր տարրերը կան եւ ճիշտ այսպէս պատահեցաւ Կովկասի մէջ Շանթի գործին համար ալ. հոն ամբաստանող կողմը՝ ի գին ամէն բանի ամբաստանեց, այդ էր իր պաշտօնը, եւ պաշտպանողներու տկարութենէն օգտուելով դատին եզրակացութեանը վրայ մեծապէս ազդեց²²:

Հոս, ազնիւ ներկաներ, ինչպէս նախապէս ըսի, ես գործին վերլուծութեանը պիտի ձեռնարկեմ, պարզելով տեսակէտներս, գնահատելով եւ քննադատելով հավասարապէս, նաեւ անդրադառնալով Հին աստուածներու մասին եղած քննադատութեանց եւ տեսակէտներու: